

հաշտեալ երեւի ընդ սմա. գէթ անյիշաչարութեամբ ընկալաւ զեղբորորդիսն, եւ զմայր նոցին զքոյր իւր, եւ հայրաբար խնամէր, հանդերձ բարեշուք շառաւիղօք եղբօր իւրոյ Օշնի՝ տեառն Լամբրունի. ամոքելով ըստ կարի զբնածին բորբոք բարուց կորեանցն Ռուբինեանց: Երեւի եւ ՚ի Ռիթա՝ դշխոյական, կամ թէ օրէն իցէ ասել՝ թագաւորամայրական իմն հեղինակութիւն ՚ի վերայ այնպիսոյ մտահարուստ որդւոյ, որպիսի ոք էր Լեւոն. որ՝ եւ ՚ի յառաջել հասակին եւ գործոցն՝ եւ ՚ի թագաւորութեանն իսկ՝ անսայր խրատուց ողջամիտ պառաւոյն, եւ նորին թելադրութեամբ՝ մինչ չեւ էր երկրորդ անգամ կին ածեալ՝ ժառանգ արթոռոյ իւրոյ կարգեաց (յամի 1209) զՌուբէն՝ թոռն եղբօր իւրոյ համանունան՝ եւ որդի Անտիոքայ իշխանին. եւ յորժամ էառ ՚ի կնութիւն զքոյր թագաւորին Կիպրոսի, զդստրիկ իւր Ռիթա՝ համանուն մօրն՝ զծնեալն յառաջնոյ կնոջէն Անտիոքացւոյ, նմա յանձնեաց սնուցանել եւ դաստիարակել: Յայսցանէ ակներեւ լինի եւ երկարակեցութիւն մօր նորին եւ մտացն առուգութիւն¹:



Տեարք Պապեռօնի եւ Լամբրունի ցայն ժամանակս հաւատարիմբ կային ՚ի սպասու կայսերաց, եւ հաւանելի է՝ թէ հանգոյն որդւոց նոցին՝ մարգեցան եւ որդիքն Ստեփանեայ ՚ի յոյն լեզու: Յանկորուստ մնացեալ բնագիրս թղթոցն եւ հրովարտակին տուելոյ առ ասպետս Հիւանդանոցին, յամին 1210, Լեւոն յունարէն ստորագրեալ է զանուն իւր, ԱԵՕ եւ հայերէն զպատիւն՝ *Թագաւոր Հայոց*. որպէս տեսանի ՚ի ճակատ գրոցս, եւ որպիսի է եւ այս՝ ՚ի ստորեւ պարզեւագրին տուելոյ յամի 1210 առ վերոյիշեալ ասպետսն: Այլ աներկբայ եւս է զի ըստ անհրաժեշտ հարկի ժամանակին եւ

¹ Ըստ նախակարգեալ վարկածի տիոց Լեւոնի՝ զայսու ժամանակաւ հարկ էր մօր նորա անցեալ լինել զեօթանասնամեանիւք: